ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆ

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն) և այլ իրավական ակտերով՝ կազմվել է Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն): Հաշվետվությունն արտացոլում է հաշվետու տարում կատարված աշխատանքները, ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրական խախտումները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը, իրավիճակի զարգացումն ու փաստացի տվյալների համեմատականը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների հետ:

Տեսչական մարմինը գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և Կանոնադրության հիման վրա: Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության, անձի ֆունկցիոնալության գնահատման բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը: Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ենթակա ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը և կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների հետ միաժամանակ Տեսչական մարմինն իրականացրել է նաև չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ ՀՀ վարչապետից ստացված հանձնարարականի, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկատվության,

քաղաքացիներից և տնտեսավարող սուբյեկտներից ստացված դիմումների, թեժ գծով ստացված զանգերի, զանգվածային լրատվամիջոցների մոնիթորինգի արդյունքների հիման վրա իրականացված, Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտներին տրված կարգադրագրերի հետևողականությանն ուղղված վարչական վարույթներ և վերստուգումներ, ինչպես նաև ՀՀ ներքին գործերի նախարարության պլանի համաձայն իրականացված՝ դեղերի շրջանառության ոլորտում նյութական պահուստին ներկայացվող պահանջների պահպանմանն ուղղված ստուգումներ:

I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը ներկայացված է հավելված 1-ում:

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի գործունեության 2025 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքը ներկայացված է հավելված 2-ում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմինը, Կանոնադրության 10-րդ կետի համաձայն, օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերահսկողության ենթակա՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, անձի ֆունկցիոնալության գնահատման, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է Տեսչական մարմնի կողմից 2023-2025 թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքների հիման վրա՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև՝ առավել ռիսկային ուղղությունների և խախտումների պարբերականության բացահայտման նպատակով:

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 27-ի 12-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2025 թվականի իրականացվելիք ստուգումների» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի շրջանակներում 2025 թվականի ընթացքում նախատեսվել էր իրականացնել թեմատիկ ստուգումներ 861 (ըստ հինգ ոլորտների 877) տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնցից՝ 831 բարձր, 4 միջին և 42 ցածր ռիսկայնությամբ, որից հաշվետու ժամանակաշրջանում հրապարակվել է 859 հանձնարարագիր (2 հանձնարարագիր չի հրապարակվել, քանի որ տնտեսավարողը դադարեցրել է գործունեությունը):

Տեսչական մարմնի կողմից հաշվետու տարում վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտներում ռիսկերի նվազեցման ուղղությունը միտված է եղել վերահսկողական աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելուն և թիրախների ընտրությանը, ինչպես նաև օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախորդ ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականների (կարգադրագիր) պահանջների կատարման վերահսկողությանը:

Արդյունքում՝ 2025 թվականին հրապարակվել է 1189 հանձնարարագիր, այդ թվում 859՝ Ծրագրի շրջանակներում, 314 վերստուգում (26,4%), ինչպես նաև 16 ստուգում՝ ըստ անհրաժեշտության, որից 1՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ներկայացված գրության հիման վրա, 1՝ Վարչապետի հանձնարարությամբ, 14՝ նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված պահանջների պահպանման ապահովման նպատակով:

Խախտումները վերացնելու նպատակով տրվել է 454 (այդ թվում վերստուգման՝ 40) հանձնարարական (կարգադրագիր):

2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների հետ միաժամանակ Տեսչական մարմինն իրականացրել է նաև չպլանավորված աշխատանքներ՝ օրենքով սահմանված կարգով հարուցվել է 2414 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 835, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 1579, որից 175-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

Ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ ոլորտի, ստուգման տեսակի, քանակի և հիմքի) առավել մանրամասն ներկայացված է Հաշվետվության V գլխում, իսկ վարչական վարույթների վերաբերյալ՝ VI գլխում:

Աշխատանքային իրավունքի բնագավառում շարունակվում են արձանագրվել անօրինական աշխատանքի (առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի աշխատող), աշխատավարձի վճարման ժամկետների և կարգի խախտումներ: 2026 թվականին ակնկալվում է վերը նշված խախտումների նվազում էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերի կիրառման շնորհիվ:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում հիմնականում արձանագրվել են աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման պահանջների (կոլեկտիվ պաշտպանության միջոցների բացակայություն, ուսուցման կամ հրահանգավորման բացակայություն), աշխատավայրում սանիտարական նորմերի և կանոնների, աշխատանքի վայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի առնչությամբ ծառայողական քննություն չիրականացնելու, նախնական և պարբերական բժշկական զննություն չանցկացնելու, աշխատանքի առողջ և անվտանգ կատարման պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի կամ տեխնիկական անվտանգության կանոնների խախտման դեպքեր:

Դեղերի շրջանառության ոլորտում արձանագրվել են Հայաստանի Հանրապետություն օրենքի խախտմամբ չգրանցված դեղեր ներմուծելու և իրացնելու,

դեղատոմսով բաց թողնվող դեղերի առանց դեղատոմսի դուրսգրման և իրացման դեպքեր:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման ոլորտում շարունակվում են արձանագրվել բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման համակարգերի շահագործողի բացակայությունը, պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգի խախտումները:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում Տեսչական մարմնի կողմից առավել ռիսկային է գնահատվել կազմակերպությունների կողմից առանց համապատասխան լիցենզիայի, ինչպես նաև պատշաճ կրթություն չունեցող մասնագետների կողմից կոսմետոլոգիական ծառայությունների մատուցումը, որոնց ուղղությամբ Տեսչական մարմնի կողմից իրականացվել են վերահսկողական աշխատանքներ:

IV. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում ըստ վերահսկողության ենթակա ոլորտների իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ՝ թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման նպատակով: Թեժ գծով ստացվող զանգերին տրվել են պատասխաններ և պարզաբանումներ: Խորհրդատվական գործունեության շրջանակներում լուսաբանվել են ոլորտներին վերաբերող ընդհանուր բնույթի հարցեր, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հարցերին տրվել է հստակ պատասխան կամ պարզաբանում՝ իրականացնելով 10336 (2024թ.՝ 10001, 2023թ.՝ 6613) խորհրդատվական աշխատանք, որից 2239՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն և գրություն, 7921 (2024թ.՝ 7824, 2023թ.՝ 5252)՝ «Թեժ գիծ» ծառայութամբ ստացված հարցերի պատասխան և պարզաբանում և 176՝ ֆեյսբուքյան էջով ստացած հարցերի պատասխան:

Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվություն

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են հետևյալ խորհրդատվական աշխատանքները.

- քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների հարցերին տրվել են պարզաբանումներ, ինչպես նաև պատասխանվել են հեռախոսազանգերի և հաղորդագրությունների միջոցով,
- Տեսչական մարմնի ղեկավար կազմը այցելություններ է կատարել բժշկական կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, ճամբարներ, ինչպես նաև բնակավայրեր (բնակիչների տներ)՝ հետադարձ կապի ապահովման, իրազեկման, քաղաքացիներին ավելի մոտ լինելու, ինչպես նաև Տեսչական մարմնին առնչվող խնդիրներին ծանոթանալու նպատակով,
- կանխարգելիչ գրություններ են ուղարկվել համայնքների, դպրոցական և նախադպրոցական հաստատությունների ղեկավարներին,
- խորհրդատվություն է տրամադրվել տնտեսավարող սուբյեկտներին՝ Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ,
- Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից իրականացվել են մի շարք իրազեկման սեմինար-քննարկումներ՝ վերահսկողության բոլոր ոլորտներով, Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող տարբեր կազմակերպությունների ղեկավարների, աշխատակիցների, ինչպես նաև ՀՈԱԿ-ների տնօրենների, բժշկական կենտրոնների բուժանձնակազմի և այլ տնտեսավարողների համար,
- վերահսկողական գործընթացում (ստուգում, վարույթ) մշտապես իրականացվել են խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ, տնտեսավարող սուբյեկտներին տրվել է Տեսչական մարմնի լիազորությունների և վերահսկողության ոլորտներին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն:

Տնտեսավարողների կողմից բարձրացված հարցերի մեծ մասը վերաբերել է.

- թվային համակարգի միջոցով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգին,

- աշխատանքի էական պայմանները փոփոխելու հիմքին և ընթացակարգին,

- աշխատանքից ազատման համար սահմանված ընթացակարգերին,

- ամենամյա արձակուրդի տրամադրման կարգին,

- նպատակային արձակուրդների տրամադրմանը,

- արտաժամյա աշխատանքի համար սահմանված հավելումների հաշվարկմանը,

- համատեղությամբ աշխատանքի կարգավորումներին,

- կարգապահական տույժ կիրառելու ընթացակարգին,

- աշխատանքի պայմանների և աշխատողների իրավունքների պահպանմանը,

- աշխատավայրում անվտանգության տեխնիկական կանոնակարգերին, հրահանգավորմանը,

- բժշկական զննությունների անցկացման ընթացակարգերին:

«Թեժ գիծ» ծառայություն

Տեսչական մարմնի «Թեժ գիծ» ծառայությամբ 2025 թվականին ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ստացվել է 7921 զանգ և 176 Ֆեյսբուքյան հարցում, 97 զանգով ավել 2024 թվականի 7824 զանգի համեմատ:

«Թեժ գծով» ստացված զանգերի բաշխումն ըստ ոլորտների՝

- աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 2884 (36,4%),
- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման ոլորտում՝ 317 (4%),
- դեղերի շրջանառության ոլորտում՝ 87 (1,1%),
- բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 180 (2,3%)
- Տեղեկատվություն՝ 2986 (37,7%),
- Տեսչական մարմնի գործառույթից դուրս՝ 1467 (18,5%),
- Ֆեյսբուքյան հարցում՝ 176:


Զանգերի ընդհանուր թիվ՝ 7921, ՖԲ հարցում՝ 176
ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 1467, 18,5%
Ֆեյսբուքյան հարցում՝ 176
Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 2884, 36,4%
Տեղեկատվություն՝ 2986, 37,7%
Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 180, 2,3%
Դեղերի շրջանառության ոլորտում՝ 87, 1,1%
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման ոլորտում՝ 317, 4%



Իրազեկման միջոցառումների իրականացում

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ կազմակերպվել են իրազեկման աշխատանքներ հարցազրույցների տեսքով, «Թեժ գիծ» ծառայությունով, մարզերում և մայրաքաղաքում կազմակերպված ֆոկուս խմբերի հետ՝ իրազեկման սեմինարների միջոցով, ինչպես նաև տարբեր հաստատություններ այցելություններով:

Հանրությանն ու տնտեսավարող սուբյեկտներին մշտապես իրազեկվել է Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ընդունված նոր իրավական ակտերի և գործող իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին, ինչպես

հարթակների և հեռախոսազանգերի, այնպես էլ տվյալ կազմակերպություններ կատարած այցերի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում իրականացվել է իրազեկման 603 աշխատանք, ստորև նշված ուղղություններով.

- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման ոլորտում՝ 44,
- աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 32,
- բժշկական օգնության և սպասարկման ոլորտում՝ 23,
- դեղերի շրջանառության ոլորտում՝ 22,
- ոլորտային իրազեկումներից զատ կատարված այլ աշխատանքներ՝ 482:







ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Կանխարգելիչ գործողություններ

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթների վերաբերյալ իրականացվել է 10939 կանխարգելիչ միջոցառումներ, որից՝ 603 իրազեկման աշխատանքներ տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, 10336 խորհրդատվական գործունեություն: 10336 խորհրդատվական գործունեությունից 2239-ը՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություններ և գրություններ, 7921-ը՝ «Թեժ գիծ» ծառայությամբ մուտքագրված զանգերի և 176-ը՝ Ֆեյսբուքյան էջով ստացված հարցերի պատասխաններ և պարզաբանումներ:

V. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 1189 հանձնարարագիր ստուգում և վերստուգում իրականացնելու համար, այդ թվում 859՝ Ծրագրի շրջանակներում (2 հանձնարարագիր չի հրապարակվել, քանի որ ձեռնարկատերը դադարեցրել է գործունեությունը), 1՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ներկայացված գրության հիման վրա, 1՝ Վարչապետի հանձնարարությամբ, 14՝ նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված պահանջների պահպանման ապահովման նպատակով և 314՝ վերստուգում իրականացնելու նպատակով: Արդյունքում կազմվել է 609 ստուգման ակտ, 320 տեղեկանք, 83-ը ուժը կորցրած է ճանաչվել, 89-ը չեղյալ է ճանաչվել, իսկ 88 ստուգում ընթացքի մեջ է: Խախտումների և թերությունների վերացման համար տրվել է 454 հանձնարարական (կարգադրագիր):



Իրականացված ստուգումներ՝ ըստ վերահսկողության ենթակա ոլորտների

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ							
ՈԼՈՐՏ	Հանձնարարագիր	Ստուգման արդյունքներ					Կարգադրագիր
		Ակտ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունքի	226	164	4	1	19	38	142
Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման	186	87	6	60	25	8	58
Բժշկական օգնության և սպասարկման	42	26	11	1	0	4	23
Դեղերի շրջանառության	121	74	3	15	18	11	61
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման	268	200	31	1	27	9	118
Աշխատանքային իրավունքի, Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման	4	4	0	0	0	0	4
Բժշ. օգն. և սպաս, Բնակչութ,	12	7	0	0	0	5	7

սանիտարահամաճարակային անվտանգ. և հանրային առողջության ապահովման							
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե ՔՆ-2508001	1	1	0	0	0	0	0
Վ-2507001 վարչապետի հանձնարարական	1	0	0	0	0	1	0
Նյութական պահուստ	14	1	11	0	0	2	1
Ընդամենը	**875**	**564**	**66**	**78**	**89**	**78**	**414**

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

ՈԼՈՐՏ	Հանձնարարագիր	**Ստուգման արդյունքներ**					**Կարգադրագիր**
		Ակտ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունքի	25	6	19	0	0	0	6
Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման	45	8	35	0	0	2	5
Բժշկական օգնության և սպասարկման	42	2	38	0	0	2	2
Դեղերի շրջանառության	38	18	15	1	0	4	16
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման	138	9	123	4	0	2	9
Աշխատանքային իրավունքի, Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման	2	1	1	0	0	0	1
Բժշ. օգն. և սպաս, Բնակչութ, սանիտարահամաճարակային անվտանգ. և հանրային առողջության ապահովման	22	1	21	0	0	0	1
Դեղերի շրջ., Բնակչության սանիտարահամաճ. անվտ.անվտ.	1	0	1	0	0	0	0
Նյութական պահուստ	1	0	1	0	0	0	0
Ընդամենը	**314**	**45**	**254**	**5**	**0**	**10**	**40**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց աշխատակիցների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ ընդունվել է 970 որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր 1.038.762.994 ՀՀ դրամի չափով, 304՝ նախազգուշացում:



VI. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Տեսչական մարմնում 2025 թվականի ընթացքում ստացվել է 993 (2024թ՝ 864, 2023թ՝ 833) դիմում և բողոք, որոնցից օրենքով սահմանված կարգով 31-ը վերադարձվել է, 39-ը վերահասցեագրվել է, 88-ին տրվել է համապատասխան պարզաբանում, 835 դիմումի հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ, որոնց մի մասը ընթացքի մեջ է:

Այսպես, ըստ ոլորտների.

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107



Օրենքով սահմանված կարգով հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից հարուցվել է 2414 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 835, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 1579, որից 175-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

Հարուցված 450 վարչական վարույթի արդյունքում տրվել են խախտումները վերացնելու նպատակով առաջադրանք տալու վերաբերյալ կարգադրագրեր, 1741 վարույթ կարճվել է, այդ թվում՝ 314-ը՝ դիմումից հրաժարվելու հիմքով, իսկ մնացածն ընթացքի մեջ են:





	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության և հանրային առողջապահության ապահովման ոլորտ	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտ	դեղերի շրջանառության ոլորտ	բժշկական օգնության և սպասարկման ոլորտ
2023թ.՝ 3501	500	1474	140	1387
2024թ.՝ 2631	559	1323	141	608
2025թ.՝ 2414	383	1523	112	396

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Հարուցված վարչական վարույթների արդյունքում, տնտեսավարող սուբյեկտների և դրանց աշխատակիցների նկատմամբ՝ որպես պատասխանատվության միջոց, ընդունվել է տույժ նշանակելու մասին 1072 որոշում, ընդհանուր 1.492.836.301 ՀՀ դրամի չափով, 219՝ նախազգուշացում:



VII. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐ ԵՆ ՀԱՆՎԵԼ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի կողմից իրականացած վերահսկողության արդյունքների վերլուծությամբ պարզվել է, որ վերահսկողության բոլոր ոլորտներում առանձնանում են օրենսդրական մի շարք պահանջներ, որոնց խախտումներն առավել հաճախ են հանդիպում: Այսպես.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ✓ ՀՀ-ում չգրանցված դեղեր ներմուծելը,
- ✓ դեղերն օրենքի խախտմամբ ներմուծելը,
- ✓ չգրանցված կամ օրենքի խախտմամբ ներմուծված դեղեր իրացնելը,

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

✓ դեղատոմսեր չգրելը և դեղատոմսով բաց թողնվող դեղերն առանց դեղատոմսի բաց թողնելը,

✓ լիցենզիայի պայմանների և պահանջների խախտումները:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

✓ լիցենզիայի պայմանների և պահանջների խախտումները,

✓ բժշկական փաստաթղթերի թերի լրացումը,

✓ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների խախտումները,

✓ առանց համապատասխան ՇՄՋ հավաստագրի աշխատանքի թույլատրելը:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

✓ աղմուկի՝ օրենսդրությամբ թույլատրելի մակարդակների գերազանցումը,

✓ խմելու ջրամատակարարման համակարգին ներկայացվող պահանջների խախտումները,

✓ բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների խախտումները,

✓ պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգի խախտումները

✓ սանիտարական նորմերի խախտումները:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

✓ աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման խախտումները,

✓ աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների առողջական վիճակի պարտադիր

նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը խախտելը,

- ✓ կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերին ներկայացվող սանիտարական նորմերի և կանոնների խախտումները,
- ✓ աշխատավարձ և վերջնահաշվարկ չվճարելը կամ ժամկետանց վճարելը,
- ✓ օրենքով սահմանված կարգով և ժամկետում աշխատանքային պայմանագրեր չկնքելը,
- ✓ ամենամյա արձակուրդի տրամադրման կարգը,
- ✓ արտաժամյա աշխատանքի դիմաց օրենքով սահմանված կարգով չվճարելը:

VIII. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 17 առաջարկություն (2024թ.՝ 26): Միաժամանակ, քննարկվել և կարծիք է ներկայացվել տարբեր գերատեսչությունների կողմից ներկայացված 54 նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ (2024թ.՝ 39):

IX. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի դեմ բերվել է 515 բողոք, որից 165 բողոք՝ Տեսչական մարմին, 350 բողոք՝ դատարան:

Հաշվետու տարվա ընթացքում կայացվել է 435 վճիռ/որոշում՝ դատարան բողոքարկված գործերի վերաբերյալ, որից 250-ը՝ ի օգուտ բողոքաբերի (57,5%):

2024թ. կայացվել էր 362 վճիռ/որոշում, որից 237-ը՝ ի օգուտ բողոքաբերի (65,5%): 2023թ. կայացվել էր 224 վճիռ/որոշում, որից 143-ը՝ ի օգ ուտ բողոքաբերի (63,8%): 2022թ. կայացվել էր 148 վճիռ/որոշում, որից 107-ի դեպքում՝ ի օգուտ բողոքաբերի (72,3%):

Կայացված վճիռների/որոշումների արդյունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մի շարք դեպքերում տեղի են ունեցել օրենքով սահմանված վարչական վարույթի ընթացակարգային նորմերի խախտումներ: Մասնավորապես, վարչական ակտ կայացնելիս գործի նյութերը չեն ենթարկվել ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրման, չեն հավաքագրվել և հաշվի առնվել գործին վերաբերելի բոլոր փաստաթղթերն ու ապացույցները, ինչպես նաև պատշաճ կերպով չի դիտարկվել իրավախախտի մեղքի բացակայության հանգամանքը: Բացի այդ, ընդունված վարչական ակտերը չեն համապատասխանել որոշակիության և հստակության պահանջներին, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է ենթադրյալ իրավախախտի բացակությամբ՝ արդյունքում զրկելով վերջինիս լսված լինելու իրավունքի իրացումից և այլն:

Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել են կայացված բոլոր վճիռները/որոշումները, որոնց դեպքում բողոքը բավարարվել է, վեր են հանվել խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվել են միջոցներ՝ Տեսչական մարմնի դեմ բերված և բավարարված բողոքների ցուցանիշը նվազեցնելու նպատակով: